ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/197

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3-7»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18353-2019 գրությամբ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 05.11.2019թ.-ի թիվ 612 գրության հիման վրա, 06.11.2019թ.-ին «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 06.11.2019թ.-ին, իսկ 07.11.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 13.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 13.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.11.2019թ.-ին:

2. ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն 05.11.2019թ.-ի թիվ 612 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի միջև 14.02.2019թ.-ին կնքված «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3-7» ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով մասնակիցը ստանձել է պայմանագրով սահմանված հացի (լավաշ) մատակարարման պարտավորությունը:

Սակայն Մասնակիցը պատշաճ ձևով չի իրականացրել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ խախտել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը: «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել են գրություններ և պահանջվող քանակի վերաբերյալ պատվերներ, սակայն չմատակարարելու մասին ոչ մի տեղեկություն չի ատացել, ինչպես նաև վերջինս չի պատասխանել հեռախոսազանգերի:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ

կետը, ներկայացրել են «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.11.2019թ.-ին գրությամբ դիմել է «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18353-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/197 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի միջև 14.02.2019թ.-ին կնքվել է թիվ «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3-7» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ' Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 30-ը:

Նույն հավելվածի համաձայն՝ մատակարարումը պետք է կատարվի ք. Սևան, Կարմիր Բանակի 68 հասցեով: Մատակարարման կոնկրետ օրը և քանակը որոշվում է գնորդի կողմից նախնական պատվերի միջոցով: Մատակարարումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին՝ 09:00-ից մինչև 16:00-ն:

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն 28.10.2019թ.-ին թիվ 599 գրությամբ դիմելով «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին՝ հայտնել է, որ Մասնակցի կողմից Պատվիրատուի 18.10.2019թ.-ի և 26.10.2019թ.-ի պատվերները չեն իրականացվել:

Միաժամանակ Մասնակցին է ուղարկվել 31.10.2019թ.-ին անհրաժեշտ լավաշի քանակի վերաբերյալ տվյալները:

Պատվիրատուն նաև տեղեկացրել է, որ երրորդ անգամ պատվերն չմատակարարելու դեպքում վերջինիս կողմից ապրանքի չմատակարարելու հիմքերն կուղարկվեն ՀՀ ֆինանսների նախարարություն:

www.gnumner.am համացանցային կայքում 04.11.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի միջև 14.02.2019թ-ին կնքված «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3-7» ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով Մասնակիցը ստանձել է պայմանագրով սահմանված հացի (լավաշ) մատակարարման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հւսսցեով Գնորդին մատուսկարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Սակայն Մասնակիցը պատշաճ ձևով չի իրականացրել պւսյմանագրային սյարտավորությունները, այն է՝ խախտել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը: Մասնակցին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել են գրություններ և պահանջվող քանակի վերաբերյալ պատվերներ, սակայն չմատակարարելու մասին ոչ մի տեղեկություն չի ատւսցել:

Պայմանագրի 2.1.7 կետը համաձայն՝ Գնորդն իրավունք ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից փաստացի չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ն միակողմանի

հրաժարվում է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համարելով այն միակողմանի լուծված, և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18353-2019 գրությամբ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն' պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ' պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն' պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կագով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել

ապրանքը և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն' պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր

մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի միջև 14.02.2019թ.-ին կնքված թիվ «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3-7» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 30-ը:

Նույն հավելվածի համաձայն՝ մատակարարումը պետք է կատարվի ք. Սևան, Կարմիր Բանակի 68 հասցեով: Մատակարարման կոնկրետ օրը և քանակը որոշվում է գնորդի կողմից նախնական պատվերի միջոցով: Մատակարարումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին՝ 09:00-ից մինչև 16:00-ն:

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն 28.10.2019թ.-ին թիվ 599 գրությամբ դիմելով «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին՝ հայտնել է, որ Մասնակցի կողմից Պատվիրատուի 18.10.2019թ.-ի և 26.10.2019թ.-ի պատվերները չեն իրականացվել:

Միաժամանակ Մասնակցին է ուղարկվել 31.10.2019թ.-ին անհրաժեշտ լավաշի քանակի վերաբերյալ տվյալները:

Պատվիրատուն նաև տեղեկացրել է, որ երրորդ անգամ պատվերն չմատակարարելու դեպքում վերջինիս կողմից ապրանքի չմատակարարելու հիմքերն կուղարկվեն ՀՀ ֆինանսների նախարարություն՞

www.gnumner.am համացանցային կայքում 04.11.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ի միջև 14.02.2019թ-ին կնքված «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3-7» ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով Մասնակիցը ստանձել է պայմանագրով սահմանված հացի (լավաշ) մատակարարման պարտավորությունը:

Սակայն Մասնակիցը պատշաճ ձևով չի իրականացրել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ խախտել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը: Մասնակցին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել են

գրություններ և պահանջվող քանակի վերաբերյալ պատվերներ, սակայն չմատակարարելու մասին ոչ մի տեղեկություն չի ատուսցել:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից փաստացի չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համարելով այն միակողմանի լուծված, և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18353-2019 գրությամբ «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/197 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գրիգոր Բաբայան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**